

ՎԱՐԱԴ ԱՌԱՋԵԼՅԱՆ

ԵՂԻՉԵ, ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(Ե. Տեր-Մինասյանի բարգմանության առքիվ)

Եղիշեն «Հայ պատմագիրների մատենաշարի» երկրորդ գիրքն է աշխարհաբար թարգմանությամբ. գիրքը լույս է տեսել Հայոցեանրատի հրատարակությամբ և, ըստ թարգմանիչի հաղորդման, միայն աշխարհաբար, հինգերորդ թարգմանությունն է, չհաշված Կ. Կոստանյանի «Հյուսվածք հայոց հին պատմագիրների խոսքերից» (Տիֆլոս, 1894 թ.) աշխատության՝ Եղիշեի ընդարձակ կտարների թարգմանությունը, և գարձյալ՝ չհաշված մեր Զեռագրատանը պահված № 5920 ձեռագիրը արևմտահայ աշխարհաբարով, որը բավականին հաջող թարգմանություն է, բայց առանց թարգմանիչի անվան հիշատակության ու թվականի:

Ի՞նչն է պատճառը այսքան բուռն հետաքրքրության, որ ուղղված է գեղի Եղիշեի այս փոքրիկ մատյանը: Անշուշտ առաջին հերթին բովանդակությունը, երկի ոգին, էությունը, որը համապատասխանում էր հայ ժողովրդի ազատատենչ գաղափարին: Եղիշեի գիրքը ժողովրդին ներշնչել է բոցավառ սեր գեղի Հայրենիքը, գեղի իր ազատությունն ու անկախությունը: Հայ ժողովուրդը կարդալով այս գիրքը ատելությամբ է լցվել զավթիչների ու բռնակալների նկատմամբ, որոնք հանդգնել են գիտչել նրա Հայրենիքի ու ազատության շահերին, և վերջապես սրանով ոգեսրված ժողովուրդը անձնուրաց կովում զարկել է թշնամուն, որտեղ որ այդ թշնամին հանդես է եկել նրա հարազատ Հայրենիքի սահմաններում:

Ինչպես տեսնում ենք, գրքի բովանդակությունը միանգամայն աշխարհիկ է: Զեսով էլ Եղիշեի գիրքը տարբերվում է իր ժամանակաշրջանի մյուս գրվածքներից: Սա սովորական առումով պատմություն չէ, այլ մի ամբողջ ժողովրդի պատմական ճակատագիրը վճռող պատերազմի ու այդ պատերազմում քաջարար զահվող հերոսների սիրագործությունների գեղարվեստական, ոգեշունչ նկարագրություն: Հեղինակը աղբել է յուր նյութով. նա չոր ու ցամաք չի պատմագրել, ինչպես ուրիշ պատմագիրներ: Նա ոգեսրվել է և միաժամանակ կամեցել է իր գիրքը ոգեսրիչ դարձնել սերունդների համար: Նա ստեղծել է գրական տիպեր և սրտով ու գաղափարով կապվել է այդ տիպերի հետ իր մտքի ու զգացման բոլոր թերերով: Առ այսպիսի կապվել է այդ տիպերի հետ իր մտքի ու զգացման բոլոր թերերով: Նա ստեղծել է գրական տիպեր և սրտով ու գաղափարով կապվել է իր նկարագրած բացասական տիպերին և կարողացել է այդ տաելությունը մեծ ուժով ներարկել իր բնթերցողների մեջ: Եղիշեն նպատակ է դրել իր բնթերցողներին ներշնչել ազատատենչ ոգի, քաջություն, անձնուրացություն: Հենց այս է ոգեսրել ժողովրդին և լարված հետաքրքրություն առաջ բերել Եղիշեի գրքի շուրջ:

Եղիշեի գրքի ժողովրդականության երկրորդ պատճառը լեզուն է: Նրա ոճը հասցված է բացարձակ կանոնավորության, այսուեղ վերացված են կողմնակի գերբայական լրացումները, որոնք այլ երկերում գտնում են բացարձակ անհասկանալի՝ շնորհիվ անհարազատ խնդրառության ու շարադրառության: Զկան երկրորդական նախադասությունների ավելորդ խճողումներ. խոսքի կազմակցությունների ընթացքը պարզ է ու որոշ, նախադասության դիմավոր անդամները գտնվում են ուշադրության կենտրոնում՝ իրենց շուրջ ունենալով իրենց լրացյալները: Այս պարզության և բնականության հետ զուգընթաց է կանոնավոր և հաստատուն շարադասությունը: Երբեմն ժողովրդական խոսքածքին մոտ կանգնած, շատ կարծ, նախադասությունները հաջորդում են իրար յուրահատուկ կշռույթով, որոշակի չափով ու հանգով, որ չափածո խոսքի տպավորություն է առաջացնում: «Անյագական ձայնիւ հանապազորդեալ էր ի պաշտաման և անհատ ազօթիւր միշտ բնդ Աստուծոյ ի բարձունս խօսէր: Աղ եղե նա անհամելոց և խթան ընդուստուցիչ ամենայն հեղգացելոց: Դարովեցաւ նովաւ ազահութիւն, և կարի յոյժ ամաշեաց նովաւ շուայտութիւն որկրամոլութեան: Առողջութիւն եղե նա աշխարհիս Հայոց, և բազում միրաւորք ի ծածուկ նովաւ գտին զառողջութիւն» (Ութերորդ եղանակ, Վենետիկ, 1859, էջ 149):

Առա մի ուրիշ օրինակ նշանավոր «Ճիկնայք փափկասունք» հատվածից. «Կործանեցան բարձրագահք տաճարաց նոցա, և խանգարեցան սօրասք երախանաց նոցա. անկան կործանեցան տպարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամպք ապաստանի նոցա. չորացան ազագեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա, և տաշտախիլ եղեն որթք դիներեն այդեաց նոցա»:

Ոչ միայն այսպիսի բանաստեղծական կտորների մեջ, այլև ոռվորական պատմողական հատվածներում էլ Եղիշեն խույս է տալիս լեզվական բարդ ճարտասահական հնարքներից՝ ամենին հասկանալի մնալու աստիճանի: Այսպիս է ոչ միայն բնդանբազես շարահյուսության մեջ, այլև խընդրառության և բառերի ընտրության մեջ: Այսպիս էլ սովորական բառերի ընտրությունը կազմում է նրա պարզ շարահյուսության հետ, որը գրական լեզուն ավելի է մոտեցնում բանավոր խոսքածքին: Հինգերորդ դարի կանոնիցացիայի հնթարկիած հոլովումից և խանգարհումից առանձնացող ձեւաբանական նոր երեսույթների ազատ կիրառությունը նրա լեզուն էլ ավելի է մոտեցնում բանավոր խոսքածքին, ուստի և հեռացնում է ճարտասահական ոճից: Շինականի խոսքաշինությամբ հարուստ, գիպուլ ու սլացիկ կապակցությունները, խմաստալից աֆորիզմները, համեմատություններն ու հակադրությունները նրա ոճը գարձնում են կենգանի, հյութեղ՝ բացառելով բոնապրոսության ճիպ ու ջանքը: Նրա ոճը միանգամայն ինքնուրույն է. այս իմաստով նրան շատերն են աշակերտել: Եղիշեի թռչող խոսքերը մեր հին լեզվի մեջ մըցակից չունեն: «Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք», «Զուգութիւն է մայր բարեաց, անդուգութիւն ծնօղ չարեաց». «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»: «Որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի մահուանէ», «Չիք յանիրաւութենէ արդարութիւն, ի ստութենէ՝ ճշմարտութիւն»: «Արջք օրհասականք ընդ վախճանել շնչոյն հզօրադոյնս կոռուին» և այլն:

Պատմողական խոսքը օժտելով բազմաթիվ աֆորիզմներով՝ Եղիշեն իր ոճը գարձնում է իմաստալից, հատու և միաժամանակ սեղմ ու կենգանի:

դրա համար նրա դարձվածքները հեշտությամբ հիշվել են և դարձել թոշող խոսքեր ու ժողովրդականացել:

Եղիշեի համեմատությունները, էպիտետները կրում են ժողովրդական լեզվի ու ոճի հիպերբոլիկ բնույթը, սրանք առավել աշխատացնում են պատմելածեր՝ դարձնելով այն թեթև, ուսմանտիկ, սրանով հեղինակը փառատում է նյութի ընդհանուր մոայլ տոնը: Ինչպես որ Եղիշեի հերոսները թեթև ու զվարի կրում են իրենց խոշտանգումներն ու պատիժները, այնպես էլ նա անմոայլ է պատմում մոայլ երեսույթները, բայց բոլոր դեպքերում էլ զգում ենք, որ պատմիչը բանաստեղծ է և ապրում է պատմությամբ, իր նյութի շարադրությամբ:

Եղիշեի աշխարհաբար թարգմանությունները ոչ միայն հնացած են՝ իրենց լեզվով, այլև ունեն բազմաթիվ սխալներ, մութ անմեկնելի կտորներ, որոնք միանգամայն աղճատում են Եղիշեի երկի ոգին ու էությունը:

* * *

Աշխարհաբար թարգմանությունների մեջ ամենավաղ ժամանակի թարգմանությունը Մարտիրոս Սիմոնյանին է՝ «Եղիշե վարդապետի պատմությունը Վարդանի և հայոց պատերազմի համար», Մոսկվա, 1863: Ինչպես հրատարակության թվականից երեսում է, թարգմանվել է մեր նոր գրական լեզվի սկզբնական շրջանում. բնուկան է, այդ ժամանակի աշխարհաբարը չէրկարող արտահայտել Եղիշեի կլասիկ լեզուն՝ հարուստ շքեղ դարձվածքներով, իմաստալից սեղմ աֆորիզմներով: Այդ պատճառով էլ Մարտիրոս Սիմոնյանի թարգմանության մեջ նկատվում են աշխարհաբարի թոթովանքներ, գեռ չենք խոսում սխալների մասին: Այսպես՝ Առաջի անամենելով զօրագլուխն յաղուրյան, որ ոչ ումեր ոտնիար լիցի (տպագիր՝ լինի) (Վենետիկ, 1859, էջ 6), Սիմոնյանը թարգմանել է. Աչքի առաջև ունենալով հաղթուրյան զորագլխին, որ ոչ որի ոտի տակ չէ զարկում քշնամուրյամբ: Ահա ակամա և արտասվալից աչքերով զրում ենք այն շատ կոտորվածքը, որ մենք ինքներս պատահեցինք..

Ավելորդ է ցույց տալ թարգմանիչի սխալները, դրանք ինքնին պարզ են: Ահա մի ուրիշ նախադասություն, որ բոլորովին անմիտ է: Եղիշեի բնածայականում՝ ուղղված Դավիթ երեցին, կա՝ ...Առ ի՞նչ արդեօք հրամայեցին, քան երէ հրամայի՛ցիս լաւագունացն: Թարգմանության 16 էջում կարդում ենք, ինչի՞նամար ևս արդյոք հրամայում, կամ գուցե քեզ հրամայում են ավելի լավերը: Մի ուրիշ թարգմանիչ (Հ. Ղուկասյանց)՝ թարգմանում է. ինչ պատվեր է արդյոք, որ տալիս ես ինձ կատարելու. անշուշտ լավագույն պատվեր: Ավելի հեռու է նաև երրորդ թարգմանիչը, որի թարգմանությունը ենթադրության արդյունք է և կապ չունի բնագրի հետ, ուստի չենք բերում: Դժբախտաբար այդ հատվածը ենթադրությամբ է թարգմանված նաև ներկա նոր թարգմանության մեջ:

Մենք կարծում ենք, որ այդտեղ Եղիշեի նախադասությունը աղավաղված է: Մեր Մատենադարանի № 1888 ձեռագիրը այդ տողերը ունի հետեւյալ ընթերցվածքով: Այլ դու, ով մեծդի և գիտուրեան Աստուծոյ, առ ի՞նչ արդեօք հրամայիցիս լաւագունիցն: Արտեղ ենթադրության ոչ մի տեղ չի մնում. պետք է թարգմանել այսպես. Հապա էլ ավելի լավերին ինչի՞ վերաբերյալ (զրել) կհրամայես: Մի ուրիշ օրինակ ես Մ. Սիմոնյանի թարգ-

մանությունից. բնագրի ԱՀ ի կարծ ընդուառուցեալ, և ոչ ի լուր զարրուցեալ. Եղիշեն կամենում է ասել, որ ինքը հանկարծ վեր չի թուել և ոչ էլ լսելով զարթնել. Սակայն թարգմանված է՝ ԱՀ ինչպես կարծիքավոր և ուրիշից լսած բաներ (տես բնագիր, էջ 14¹, թարգմանություն՝ 30): Համարյա այլպես է նաև Ղուկասյանի թարգմանությունը: Կպատճեմ ոչ թե կարծիքով, կամ ուրիշից լսած լինելով (էջ 24): Նոր թարգմանության մեջ բերածս նախադասության առաջին մասը նույնպես սխալ է. ԱՀ կարծիքներ լսելով (էջ 109): Սիմոնյանը չհասկացած նախադասությունները բաց է թողել. օրինակ՝ բնագրի անձամբ անձին արարեալ, որ նշանակում է՝ ինքնապահություն գործել, Սիմոնյանը բաց է թողել, իսկ Ղուկասյանը այդ նույն նախադասությունը թարգմանել է. Երբ ինքնի իրան զլխու բողնվեցալ ներկա թարգմանությունը ուղիղ է:

Նոցա էր փորեալ զխորխորատն, դուք բնդէ՞ր լցէր յառաջազոյն (էջ 42): Սիմոնյանը թարգմանել է. Անդունդը նոցա համար էր բացվել, ինչի՞ դուք ինքներդ նոցանից յառաջ լցրիք (էջ 73): Նույնպես և՛ թարգմանել նաև Ղուկասյանն ու Աղանյանը, որ անսպայման աղավաղում է նախադասության իմաստը: Տաշյանը առաջարկում է թարգմանել՝ ինչո՞ւ ընկաք նրանց փորած խորխորատի մեջ: Իրոք ըստ տպագիր բնագրերի այդպես պետք է թարգմանել, որովհետև խորխորատ բառը դրված է հայցական հոլովով, որ նշանակում է, թե նոցա, ոչ թե շահի տրական է, այլ անցյալ գերբայի մոտ սեռականով ենթակա: Սակայն համադասական նախադասությունների ամրող շարքը ցույց է տալիս, որ խորխորատ պետք է դրված լինի ուղղական հոլովով, որ և հաստատվում է ձեռագրով:

Զափազանց սխալաշատ է մանավանդ Հ. Ղուկասյանի թարգմանությունը: Շատ նախադասություններ բոլորովին կազ չունեն բնագրի հետ Սյոպես օրինակ, Յոյնիք իսկ՝ ոչ ելանեն ընդ քո իշխանութեանդ, թարգմանված է՝ Հոյները չեն ազատվի քո իշխանությունից:

Ինչպես տեսնում ենք, ամրողովին աղճատված է բնագիրը: Առաջին նախադասությունը սկսում Սիմոնյանից վերջացած ներկա թարգմանությամբ սխալ է: (Նոր թարգմանությունն է. Եվ մինչև անգամ հույները քո իշխանությունից դուրս չեն զա): Տպագրությունները դնում են. Ընդ քոյ իշխանութիւնդ (Վենետիկ), որից էլ առաջացել է սխալ թարգմանությունը:

Մեր Մատենագրարանի երկու լավագույն ձեռագրերը №№ 1890, 1888 (առաջինը ամենահինը և երկաթագիր) ունեն՝ Ընդ քո իշխանութեանդ, այսինքն՝ իշխանութիւն բառը տրական հոլով է և ոչ հայցական, որ պետք է թարգմանել. Մինչև անգամ հույներն էլ չեն դուրս զա քո իշխանության դեմ: Իսկ նախորդ թարգմանությունների իմաստը սխալ է ու երկդիմի: Կամ պետք է հասկանալ՝ թե հույները գտնվում էին պարսից տիրապետության տակ, որ պատմական սխալ է, և կամ հույները կընկնեն քո տիրապետության տակ, որ տնապայման մտքից է հանվում:

Բերենք մի ուրիշ օրինակ: Երբ հոյերը հարձակվում են պարսիկների վրա, մողպեսն յուր կողմանիցներին ուղղում է հետեւյլ խոսքերը: Զի քե էին զօրք աշխարհիս մոզք, ոչ ինչ խնայէին, սորա ի նոսա սատակմամբ, ոչ

¹ Բնագրի էջերը ամենուրեք ցույց են տրվում ըստ Վենետիկի 1859 թ. հրատարակության:

միայն զարտարինս և այլ և յեղբարս և յորդիս և յամենայն մերձաւորս իւրեանց, նա և ոչ յանձնինս իւրեանց: Այս խոսքերը Հ. Դուկասյանը թարգմանել է. Եթե մեր աշխարհի զորքերն անզատ մոզեր դառնային, սորա չէին խնայիլ նոցա էլ առակեցնելու....:

Այսպիս է նաև Դյուտ Ազանյանի թարգմանությունը: (Տես Դուկասյան, էջ 77, և Ազանյան, էջ 76): Շատ հասկանալի է, որ հայ ապատամբները պարսից զորքերին կծարդեին ամենայն սիրով նույնիսկ այն դեօքքում, եթե նրանք մոզեր էլ չլինեին: Ուստի սխալ թարգմանություն է ուրնագրի հետ ոչ մի կապ չունի: Աշխարհին բառը չի նշանակում մեր աշխարհի որպես թարգմանված է մոդալետի բերանով, այլ նշանակում Հայաստանի՝ այս աշխարհի, որտեղ գտնվում էր մոդալետը: Միալը առաջացել է այն բանից, որ թարգմանիչները չեն հասկացել «ո» հոգի նշանակությունը: Նոր թարգմանությունը այս դեպքում ճիշտ է:

Եւ գունդս գունդս դարձեալ գումարէին ի նոցանէ յերկիր հեռաւոր, յամուրս անապատին ի մարտ պատերազմի քշնամեացն արքայիս: Այս նախագասությունը Ազանյանը թարգմանել է. «Եվ դարձյալ գունդեր կազմեցին նրանից հեռու երկրում՝ անապատի պինդ տեղերը...»:

Մի քիչ ավելի բարգոք է Հ. Դուկասյանի թարգմանությունը, բայց գարձյալ գումարել բայց ճիշտ չէ հասկացվել: Գումարել պարզապես նշանակում է՝ ուղարկել: Օրինակ՝ Զգունդն առաջին տային ցներշապուհ Ռըմբոսյան ի գումարէին զնա պահապան աշխարհին (Եղիշե, II, էջ 56): Համեմատիր նաև՝ Եւ զայս արարեալ բազում այրում գումարեր ընդ նոսա (№ 1888 ձեռագիրը ունի զինի նոցա (էջ 39)):

Այստեղ գունդ կազմելու մասին խոսք չկա, գունդս գունդս գումարէին, պարզապես նշանակում է խումբ խումբ ուղարկում էին: Մենք կարծում ենք՝ գունդ բառը չունի նույնիսկ ուղմական գունդ բառի նշանակությունը: Նոր թարգմանության մեջ ճիշտ չի հասկացված գումարել բայց նշանակությունը, թարգմանիչը չի կարողացել ավանդականի սահմաններից դուրս գալ և գրել է. ...նրանցից զնդեր կազմեցին և ուղարկեցին...

Ունահար եղեն նմա ամենայն սիրելիիր նորա (էջ 109) նախորդ բոլոր թարգմանիչները թարգմանել են ուղղակի նշանակությամբ, որ պետք է նշանակեր՝ նրա բոլոր սիրելիները նրա համար ունահար եղան, այնինչ ունահար լինել նշանակում է՝ արհամարհել, հենց այստեղ այդ նշանակությամբ էլ գործ է ածված: Ոչ մի սիրելի չէր կարող նրան մոտենալ և ոտնահար անել: Նոր թարգմանությունը այդ դարձվածքը անարգել բայով է արտահայտել, որ կարծում ենք դարձյալ հեռու է:

Ինչպես տեսնում ենք, Եղիշեի հին թարգմանությունները ոչ միայն հնացած են, ոյլի մեծ մասամբ հեռու են բնագրից և աղավաղված: Նոր թարգմանության մեջ նախորդ թարգմանությունների բազմաթիվ կոտիտ սխալներ շակված են. այս թարգմանությունը շատ բարձր է նախորդ բոլոր թարգմանություններից:

Չնայած այս ամենին, ներկա թարգմանությունը ևս զերծ չէ մի քանի որիսումներից, որ մենք կկամենայինք առաջ բերել այստեղ: Այդ վրիպումները մեծ մասով հետևանք են այն բանի, որ ցայժմ չկա Եղիշեի բոլոր ձեռագրերի բաղդատական տպագրությունը, որով կարելի է մասամբ վերականգնել բնադիրը:

* * *

Մենք մեր քննական գիտողությունները հիմնականում բաժանում ենք երկու կարգի: Սկզբում ցանկանում ենք խոսել Եղիշեի բնագրական ազավագումների, ապա նոր թարգմանության մի քանի թերությունների վերաբերյալ:

Ակաում ենք գլխակարգումների հարցից: Մեր Մատենագրաբանի մի հինձնուագիր (1207թ.), որ ունի բազմաթիվ տարրերություններ մինչև այժմ հայտնի բոլոր տպագրություններից և ամենահին ձեռագրից (գրիված 1172թ.), ունի միայն յոթը գլուխը ոկովում է հետեւյալ խորագրով Արտարոյ վեց եղանակին: Եւթերորդ գլուխը ոկովում է հետեւյալ խորագրով Համապատասխանում է Վենետիկի և Անձևացեաց կոչված օրինակի 5-րդ և 6-րդ գլուխներին: Ուստի պետք է հաստատ առեւ որ «Վարդանանց պատմությունը», ըստ նախարանի հայտարարության՝ յոթ գլխի է բաժանված եղել: Ութերորդ գլուխը առաջացել է սխալմամբ՝ մի թիվ թոփչք կատարելով, իսկ այդ վրիոգումը դանում ենք մեր Մատենագրաբանի № 1890 Եղիշեի ամենահին ձեռագրում (1172թ.): Այս ձեռագիրը 5-րդ գլուխ չունի, իսկ 6-րդ գլուխը համապատասխանում է մյուսների 5-րդ գլխին: Եվ այս ոչ թե նրա համար որ հինգերորդ գլուխը հանդիմ է ձեռագրից, ինչպես ենթադրվել է, այլ շատ հաստակ վրիոգման արդյունք է, որի շնորհիվ էլ յոթ գլուխը դառել է ութ, մինչդեռ պատմիչը ասում է, որ ինքը յոթ գլուխներում է շարագրել յուր նյութը:

Այսուղ մենք չենք կամ ենում Եղիշեի վերաբերյալ այլ բանասիրական հարցեր ևս շաշտվել, միայն նախարան թարգմանության բուն թերացումների մասին խոսելու, կուզեինք նշել մի շարք բնագրական ազավագումներ, որոնք չեն առաջանաւ, եթե թարգմանիչ ընկ. Ե. Տեր-Մինասյանը ուշադրության տաներ իր ձևոքի տակ գտնված, իրեն ծանոթ և մատչելի ձեռագրեր, այն ժամանակ արդեն թարգմանությունը մյուս թարգմանություններից գերազանց լինելով հանդերձ, կունենար ավելի մեծ գիտական արժեք, գուցե այլիս ապագայում պետք չլիներ Եղիշեի մի նոր թարգմանություն կատարել: Այդ կարիքը կղդացվի համահավաք բնագրի հրատարակությունից հետո:

Այսպես, օրինակ՝ առաջին գլխի Եւ գուալով նող հաներ ընդ չորս կողման երկրի (Էջ 7) թարգմանված է: Աղմկելով հող էր հանում Երկրի չորս կողմերը: Նախ, աղմկելով հող չի բարձրանա, երկրորդ՝ գրաբարի գոռալ բայր մնաչել և կրվել է նշանակում, իսկ աղմուկը շատ թույլ է: Պետք է նող բառը դարձնել հողմ, որ զարմանալի կերպով հիշում է «Նոր Հայկակյանը», որ և այդպես է նաև մեր № 1888 ձեռագրում (ձեռագիրը հիշատակելիս միշտ ի նկատի ունենալ այս համարը): Ուստի այդ նախագասությունը պետք է թարգմանել: Կովելով փորորիկ էր բարձրացնում աշխարհի (և ոչ երկրի) չորս կողմերը: Նույն էջում, Եւ իրեն ետև անօրէն իշխանն երէ յաջողեցաւ շարուրիւն նորա՝ պետք է լինի՝ ոչ յաջողեցաւ, որովհետեւ Հաղկերտը հարձակվում է հոռոմների վրա՝ թերզոսի գետ կովելու համար: Իսկ թերզոսը կանխում է, ուստի չի հաջողվում նրա մտադրությունը, այդպես է ձեռագրում: Նույն էջում պետք է՝ Ահարեկ արար զամենայն զօրս, ուղղել՝ Ահարեկ արար զամենայն արս, որովհետեւ նրա գետ զորք չի դուրս եկել:

Զանձինս մխիքարէին և զընկերսն քաջալերէին և աշկարա զպաշտօնն ունէին և բազմացուցանէին բնագրի գիմաց, ձեռագիրը տալիս է միանգամայն տարրեր ընթերցվածք:

Զանձինս մխիքարէին և զընկերսն քաջալերէին և իրրե աշտարակ լուսոյ զպաշտօնն առնէին ի բազմացուցանելն. այսպիսով աշկարա բառը դուրս է բնկնում Եղիշեի բնագրից և գրաբարից, «ր առաջացել է աշտարակ բառի սխալ ընթերցումով կամ գրափոխությամբ. իսկ պաշտօնը բազմացնելը պետք է հասկանալ՝ որքան շարչարանքները բազմացնում էին: Զմոռանանք ասել նաև, որ մեր Մատենադարանի Եղիշեի՝ ամենահին ձեռագիրը (№ 1890) նույնպես ունի աշտարակ՝ աշկարա բառի գիմաց:

Մի ուրիշ նախադասություն ես. նաև բնաւ իսկ ամենեին զինչ և ասացես յերկրաւորացն, կամ ի վեհից կամ ի վատրարաց, բնաւ ուրեք եկեղեցի ի նոցանէ ոչ զացի (Էջ 36). Թարգմանությունն է. Այլի ինչ էլ որ ասելու լինիս երկրավորներից, վեհ բաներից, թե վատրարներից, ոչ մի տեղ նրանցից ամենին եկեղեցի չի դուրս զա: Հիմնական սխալը առաջացրել է ասել բայր, որի խնդիրը, եթե այդ բայր իրոք հարկավոր է այսուեղ, պատմական բացառականով պետք է լիներ, բայց գրված է բուն բացառականով. և հետո զրա հետեւանքով էլ առաջացել են մյուս սխալները. վեհ բաներից, թե վատրարներից, իսկ շարունակության մեջ թարգմանությունը լրիվ անիմաստ է: Վերեւում Եղիշեն գրում է, որ եկեղեցին մարդու գործ չէ, թագուրի պարդե չէ և ոչ էլ արվեստագետի գործ (նարտարուրիւն, այսուեղ կոնկրետ նշանակություն ունի և նշանակում է արվեստագետ, վարողեա) և այլն: Իսկ այդ ամբողջի ամփոփումն է վերորերյալ քննելի հատվածը: Այդ հատվածում ասացես բայտաձեր պետք է փոխել իցեն բայտաձեռվ, որ տալիս է ձեռագիրը և ապա թարգմանել այսպես՝ ինչ էլ որ լինի երկրավորներից, (այսինքն ով էլ որ լինի) լինի բարձրերից, թե ստորներից, ոչ մի տեղ նրանցից եկեղեցի չի գտնվի (չի ստեղծվի):

Բերենք մի ուրիշ օրինակ. Ռւսակերը և դատերը ազատաց և շինականց կրթեսցին ի հրապարակս նոցուն մոգաց: Ի հրապարակս պետք է փախել ի հրահանզս և թարգմանել՝ մոզերի հրահանզներով և ոչ մոզերի հագարակիներում, ինչպես թարգմանված է (բնագիր՝ Էջ 40, թարգմ.՝ 137): Տեղն է այսուեղ հիշել նաև Միհրներունի (ձեռագրում Միհրներուն վզրուկ) նամակի վերջին բառը... Յանդիման լերուք մեծի հրապարակին (Էջ 22), որ թարգմանվում է՝ մեծ ատյանին: Մեծի հրապարակին ազավաղ ձեր պետք է ուղղել մեծի հազարապետին: Գրեաց և յանձն արար մեծ սպարապետին, ուղղել՝ հազարապետին (Էջ 152) (ձեռագրում գրված է «Թապետին»): Դիւարար արեգական կարափեցէր (Էջ 42), ուղղել՝ ...արեգական երկիր պազանէր (նույն ուղղում): Արդ ուսուցանիցէր զպատիր խարէուրիւն մոգաց՝ ուղղել. Արդ ուսանիցիր զպատիր խարէուրիւնս մոգաց (Էջ 41): Զինչ առնիցէր զաստուծաստ հրամանն (ձեռագրում՝ ...զաստուծաստ հրամանն) նախադասության մեջ հրամանը պետք է թարգմանել՝ պատզամ կամ խոսք: Յայտնել և ցուցանել նոցա զխորհուրդն ոչ կամէին, ուղղել՝ ...ոչ կարէին, եթե չէրն կամէնում, լոելը գժվար չէր լինի: Եւ յամենայն տեղիս՝ յապատս և յանապատս միայնանցու շինէին, ուղղել՝ եւ յամենայն տեղիս անապատս, մենանցա շինէին: Ապա բառը միայն այսուեղ է գործածված, որ ինչպես տեսնում ենք, ետստմուտ

է, իսկ չ. Դրասխանակերտցու մոտ այդ բառը բառախաղի տպավորություն է գործում: Ինչ վերաբերում է անապատ բառին, ապա այն կրոնական նշանակություն ունի:

...Եղեն բնակիչը խորշակարեր դաշտաց: Որ զօրէն ազատ կրէոյ շրջէին... նախագասության գիմաց ձեռագիրը տալիս է մի նոր ընթերցվածք. ...Եղեն բնակիչը խորշակահար դաշտաց, որ զօրէն նախարարացն ազատայրոյ շըրշէին...: Եթե վերջին բառերի գիմաց տպագրի ընթերցվածքը այնուամենայնիվ հարմար է, մանավանդ որ ազատայր գեղեցիկ բառը չկա մեր բառարաններում, ապա խորշակարեր ածականը դաշտաց ձեր համար անիմաստ է, ուստի պետք է ընդունել՝ խորշակահար: Մենք չենք կասկածում նաև մյուս սրբագրության վրա:

Ոչ գոյր նոցա համեմ խանամորք անուշարար առանձինն, և ոչ հացարք որոշեալ ի պէտս սպասու ըստ ազատաց կարգի (Էջ 156): Այս անոռշության գիմաց ձեռագրում ունենք մի բոլորովին պարզ և հասկանալի ընթերցվածք: Ոչ գոյր նոցա խոնարար անուշութեան խորտկաց, և ոչ հացարք որոշեալ ի պէտս պասուց ըստ ազատաց կարգի:

Մի այլ նախագասություն ես, որ թարգմանությամբ «խոր իմաստ է ստացել»: Աչ կոչեցան պատուականը յարանց ի տաճարս նոցա (Էջ 156) թարգմանված է. պատվական մարդիկ չկանչվեցին նրանց խննույրի սեղանի: Ձեռագիրը տալիս է հետեւյալ ընթերցվածքը: Ոչ կոչեցան ի պատուական արանց ի տաճարն նոցա. այսինքն՝ ոչ թե տպամարդիկ չեն կանչվում նրանց խննույրին, այլ կանայք չեն հրավիրվում նրանց խննույրներին:

Քանիզի մարզ է աշխարհն, պետք է՝ ուղղել՝ Քանիզի ի մեր ձեռին է աշխարհն (Էջ 47): Ողորական բանիւր, ուղղել ողորկ բանիւր (Էջ 57): Զայս գրեաց և եցոյց մարզպանին, որում անունն էր Սերուխա, ձեռագրում ազավաղված է. կարծում ենք պետք է ուղղել՝ Զայս գրեաց և եցոյց մարզպանն Սերուխուայ...

Այդպես էլ պետք է կեղծ բառ համարել գրուան՝ բառը յորժամ գրուան եղեն նորա յիրս արքունի նախագասության մեջ (առև Էջ 143) և ուղղել այսպես՝ Յորժամ գրաւահեղ են նորա յիրս արքունի: Գրաւահեղ նոր բառի մեջ գրաւ պետք է նշանակի՝ հավատարմություն, դաշնադրություն, խոստում:

Սրանցով, ի հարկե, չեն վերջանում եղիշեի ընագրական սրբագրությունները. գրանք հասնում են հարյուրների, որոնց կատարումից հետո, նոր հնարավոր է եղիշեի լեզվի ճիշտ ուսումնասիրությունը կատարել: Մեր ձեռագիրը ոչ միայն տալիս է վերորերյալ տիպի տարրերություններ, այլև հոլովական, խոնարհման, շաղկապների և ավելորդ բառերի զործածության, մանավանդ շարադասության ու բառաձեւերի, որոնք հաճախ բոլորովին լեզվական ու ոճական այլ սրատկեր են առաջ բերում, քան մեզ ցայծմ ծանոթ եղիշեի ընագիրը:

Այժմ անցնում ենք թարգմանության քննությանը:

Եղիշեի ընծայականի առաջին նախագասության բան բառը թարգմանված է գործ բառով, ուրիշները թողնում են նույն բան բառը: Մալխասյանը առաջարկել է այդ բառը թարգմանել՝ շարադրություն, պատմություն, գրվածք. կարծում ենք այդպէս էլ պետք է հասկանալ: Իսկ ինչ վերաբերում է նույն նախագասության մեջ գործածված տուարինացան բային, ապա բո-

ՃՐ Թարգմանիչներն էլ թողնում են այդ բառը նույնությամբ, որ ներկա ընթերցողի համար անորոշ է և անհասկանալի. մեր կարծիքով այդ բայց պետք է թարգմանել ներուացան հասկանալի բայով, որ ճիշտ արտահայտում է գրաբարյան բայի նշանակությունը:

Նույն ընծայտկանի Յայս յեօրն զլուխս կարգադրեալ և եղեալ ծայրամիր պարապմամբ զսկիզբն և զմիջոցն և կատարածն նախադասությունը թարգմանված է. Այս յորը զլուխների մեջ կարգով գրեցի և հոծ ու լի բովանդակությամբ դրի սկիզբը, միջոցն ու ավարտը. Կարգադրել բայց պետք է թարգմանել՝ շարադրել բայով. Պարապմամբ ձեր որոշ ձեռադրեր տալիս են պատարմամբ ձեռվ, ըստ երեսութիւն թարգմանիչը (ճիշտ կերպով) հաշվի է տաել վերջին ձեր, բայց նախադասության բուն իմաստը լրիվ չի բացահայտվել, մանավանդ հոծ բառը այստեղ անտեղի է. Պետք էր թարգմանել. Այս յորը զլուխներում մանրամասն լրիվությամբ շարադրեցի (կարգադրեալ և եղեալ միենույն նշանակությունն ունեն) սկիզբը, միջինը և վերջը. Միջոց բառը չպետք է թողնել, որովհետեւ աշխարհաբարը չի արտահայտում այն, ինչ Եղիշեն է կամենում տաել. Նույն տեղում նահատակութիւն բառը թարգմանված է զինվորութիւն, իսկ նրանից վերև ...Որ ոչ ումեր ուսնահարձինի (Զեռ. լիցի) քշնամութեամբ այլ ամենեցուն (տպագր.՝ անդ) ուսուցանէ զիւր անպարտելի զօրութիւնն ամբողջ նախադասությունը սխալ է թարգմանված. Ուսնահարձինի, ինչպես վերեւում բացատրել ենք, նշանակում է՝ արմամարհել, ծաղրել, իսկ այստեղ թարգմանված է շուռ տված ձեռվ: Ուսնահարձին պահանջում է տրական հոլովով անձի խնդիր. ինչպես՝ մի ուսնահարձինի ինձ, քշնամի իմ, զի զլուխցայ (Միքիտ, Է., 8). Մի որ ուսնահարձինիցի այրույս. և այլն: Ռւատի վերեխ նախադասությունը պետք է թարգմանել, որը ոչ որին չի ծաղրում (կամ արհամարհում) քշնամությամբ և ոչ՝ որը ոչ որից քշնամությամբ ուսնահարձինիցի: Այս դարձվածքը սակայն 109 էջում ուղիղ է թարգմանված: Իսկ հաջորդ նախադասությունը պետք է այն էջում ուղիղ է թարգմանված: Իսկ հաջորդ նախադասությունը. Եւ ահա ո որ կամենում է, առարինի զինվոր է քննունում: Քերականորեն բոլորովին այդպես չպետք է հասկանալ. այլ բան է, եթե լիներ զոռք, բայց ոչ տպագրությաւնների մեջ և ոչ էլ ձեռադրերում նման ընթերցվածք չկա: Եթե պետք է այնպնա թարգմանել, որ դորադլուխը անզայման ընդունողը լինի, առա այդ նախադասության ուղիղ թարգմանությունն է՝ Եւ ահա ով որ կամենա, կընդունի որպես քաջ զինվոր: Հաջորդ նախադասության թարգմանությունը նույնպես պետք է ուղղել Եւ քանզի բազմադիմի է նահատակութեանդ անուն թարգմանված է. Եւ որովհետեւ զինվորությունը բազմադիմի կոչում ունի: Մալխասյունը առաջարկել է (Մուրճ, 1892 թ., Խ. 1) անուն բառը թարգմանել գործ և ըստ այդմ էլ նահատակութիւն պետք է թարգմանել՝ բազություն: Մեղ թվում է անուն նահատակութեան կամ նահատակութեան անուն պետք է թարգմանել՝ նահատակություն բառը:

Գրաբար այս դարձվածքի մեջ անուն նշանակում է բառ. ինչպես մենք հիմա ասում ենք զիսուրյուն բառը, պետություն բառը, գրաբար էլ առվում է. անուն պետութեան, անուն զիսուրյեան և այլն: Համեմատիքը. Բայց թէպէս և ասին ինչ անուանը ի զրոց յուշկապարկաց կամ համբարուաց կում պարկաց: Անուանը առանց անձանց են յուշկապարկաց և իշացլուց (տես Եղիշեկ. 1, իդ), որ թարգմանվում է. Բայց թէպէս Աստվածաշնչի կողմից

հիշտակվում ևն նուշկապարփկ, համբարու, իշացուլ բառերը. նուշկապարփկ և իշացուլ բառերը առանց անձնավորման են: Իսկ Եղիշեի նախադասությունը պետք է հասկանալ. Քանի որ բազմազան է (այսինքն բազմաթիվ նշանակություն ունի, բազմարովանդակ է) նահատակություն բառը...:

Վերոհիշյալ նախադասության շարունակություն կազմող Զոր և մեծ իսկ բան զամենայն սէր սուրբ յանենենգ մտաց զիտեմբ նախադասությունը համարձակվում ենք թարգմանել. Որը հենց մեծ ենք նանաչում, բան անենենգ սրտի (միտք — սիրտ) ամեն սեր և ոչ՝ Այս անենենգ սրտի սուրբ սերն ամեն բանից մեծ ենք նանաչում, ինչպես թարգմանված է, ինչպես և տուշարկում է Ս. Հարությունյանը «Հովիտում»: Սէր բառը չի կարող բռնուղիդ խնդիրը լինել, քանի որ զամենայն բառը պոկելով նրանից՝ այն գարձնում ենք անորոշ, իսկ զոր բառը այստեղ չի նշանակում այս, այլ զոր ուղիդ խնդիր է զիտեմբ բայի համար, իսկ՝ բան զամենայն սէր բազմատության պարագան է (Էջ 10): Խաղացին զնացին յիւրաքանչիւր աշխարհաց լրջմառութեամբ... թարգմանված է՝ Յուրաքանչյուր երկրից միամտուրյամբ ելան գնացին: Նախ յիւրաքանչիւր նշանակում է՝ յուրաքանչյուրը յուր, իսկ թարգմանությունը անորոշ է. լրջմառութիւն չի նշանակում միամտուրյուն, այլ՝ ուրախություն: Մեր բերած նախադասության մեջ լրջմառութեամբ ձեփից հետո կա անտրասում խնդութեամբ, որ ձեռագիրը չունի, որ չի ճանաչում նաև «Հայկագեան բառարանը»: Թվում է թե այդ հետագա գրիչների բացատրությունն է, եթե չենք բնդունում, որ այդ սովորական հոմանիշ հավելադրություն է: Եթե լրջմառութիւն նշանակում է՝ միամտություն, որ չգիտեմ ինչպես է հասկանում հարգելի թարգմանիչը (գրաբարյան՝ հավատարփմ, թե մեր նախ), ապա ինչպես թարգմանենք շատ օրինակներից միայն մեկը՝ Խորենացու Մեծաւ լրջմառութեամբ հրամայէ առնել նմազարունի դիւանն: (Խորենացի, 1, Բ.): Հիշենք սակայն որ, յիւրաքանչիւր բառը մեծ մասամբ ձեշտ է թարգմանված: Համեմատիր բնագրի Էջիր 15, 27, իսկ որոշ տեղեր էլ անտեղի կերպով իր, իրենց առնված են փակագծում:

Տեղին է այստեղ հիշտատակել նաև մի ուրիշ հանգամանք, որ գմբախառար թարգմանիչը հաշվի չի տուել. բնագրական ազավագումները իրենց անհրաժեշտ ծանոթագրությունը չեն ստացել, որպեսզի շահագրգուն ուսումնառիրողներին: Այսպես օրինակ՝ Էջ 29-ում. եւ երէ առ մարդիկ այս պաշտի ի ձեռն բագաւորական վիճակին խրատու խնամ տանել յիւրում իշխանութեանն նախադասության մեջ պաշտի բայը անիմաստ է, պետք է ուղղել՝ պատշաճի և ապա թարգմանել: Աչ թե՝ մարդկանց մեջ այս է կատարվում, այլ՝ մարդկանց այս է պատշաճում (Էջ 26): Զի հայեցեալ մարդիկ ի յանդիմանութիւն ապականացու տարերաց, թարգմանված է. Որպեսզի մարդիկ տեսնելով այս ապականացու տարերի առկայությունը: Նախ առնք, որ ամենուրեք ապականութիւն, ապական, ապականացու բառերը մնացել են անթարգմանելի. գրանք միշտ պետք է թարգմանել՝ փշացող, ոչնչացող, փշացում և այլն: Յանդիմանութիւն բառը այստեղ չի նշանակում՝ տոկութիւն, այլ նշանակում է՝ հակառակություն, որովհետեւ մի քիչ մերե Եղիշեն առում է՝ նյութերը միմյանց հակառակ են (տես նույն Էջը). գրա համար էլ առաջարկում ենք Զի երէ միարանէին տարերս՝ կարգալ՝ Զի երէ միարան էին և թարգմանել՝ երե այս տարերը նաշտ (ոչ հակառակ միմյանց)

լինէին. որովհետեւ եթե թարգմանենք այնպես, ինչպես թարգմանված է, այն ժամանակ վերեի խռովը, որտեղ Եղիշեն առում է, թե սրանց արարիչը ածէ ի սիրելութիւն հաւանութեան (տպագիր. հաւանութեամբ), այսինքն միաբանում է, հաւանություն կառաջանա, որովհետեւ նրանք իրոք միաբանվում են:

Էջ 92. ...Ար ի վերայ նոցա նստէր ի բարձր դիտանցին իրեկ յամուր քաղաքի. թարգմանված է՝ Արք նրանց վրա նստած էր (ինչպես) բարձր դիտանցում, ինչպես ամուր քաղաքում: Ինչպես առնված է փակագծում հաջորդ կրկնությունից խույս տալու համար: Դա ոչ թե նշանակում է՝ ինչպես զիտանսցում, այլ իրոք նստած էր զիտանոցում, որ իրենց մեջքի վրա կրում էին փղերը: Իսկ հաջորդ մասը, որ թարգմանված է՝ ինչպես ամուր քաղաքում, պետք է թարգմանել՝ ինչպես քաղաքի ամրոցում: Ամուր բառը Եղիշեի մատ համարյա միշտ ամցոց է նշանակում, սրա համար օրինակի պետք չկա էլ, քանի որ համեմատության իմաստից արդեն պարզ է:

Վերցնենք մի ուրիշ նախադասություն (Էջ 151). Զի թէպէտ և փոխեցաւ նա ի գործոյ հազարապետութեանն արքունի, վասն զի (տպագրությունները՝ հ) ի բազում իրս գտաւ վնասակար, ինքն իսկ յանձն իւր կրրէր զաւեր աշխարհին Հայոց, վասն որոյ և մեծաւ անարգանոր յուղարկեցաւ ի տուն իւր, աւելայն զկապելոցն ոչ երբեք չարախոս կամէր լինել...: Որպեսզի պարզ լինի այս մեջ բերված երկոր նախադասությունը, հանենք մեզ հետաքրքրություղ վերջին մասի երկրորդական նախադասությունը. Ինքն իսկ յանձն իւր կրրէր զաւեր աշխարհին Հայոց, սակայն զկապելոցն ոչ երբեք չարախոս կամէր լինել..., (ձեռագրում՝ վասն սրբոցն ոչ կրտեցաւ չարախոս լինել): Յանձն իւր կրրէր զաւեր աշխարհին Հայոց թարգմանված է. «Ի՞նքն հենց իրեն էր համարում հայոց աշխարհի ավերման պատճառը»: Նախ կրրել չի նշանակում համարել. մենք կթարգմանեինք՝ մշտիկել, նրանանգել. Երկրորդ՝ յանձն հայցական հոլովով չէ, որ համարենք ուղիղ խնդիր, այլ ուղիղ խրնդիր աւեր բառն է. և այսուղ պատճառ չկա: Պետք է թարգմանել՝ ինքն իր մեջ մշտիկում, կամ ինքն էր նրանանցում հայոց երկրի («աշխարհի») կործանումը:

Էջ 106—107. Երբեկ կրկնեցին և երեկենցին ցուցանելով ի ներք յարրունիսն, հաստա վնիու մահու ի վերայ նորա. թարգմանված է. Երբ երկու երեր անզամ կրկնեցին՝ հասկացնելով քազավորին ներսում, մահվան վնիու տրվեց նրան. հասկացնելով քազավորին մասը միանդամոյն իմաստագուրի է և ոչ մի բառի հետ չի կառվում: Բացի այդ, այսուղ թագավորի մասին խոսք չկա: Ի ներք յարրունիսն կապված է հաստա բայի հետ և պետք չկա սոսրակետով անջատել, միայն մնում է ցուցանել բայը, որը այսուղ բոլորովին ավելորդ է, անիմաստ ու խնդրառությամբ ոչ մի բառի հետ չի կապվում (ձեռագիրը չունի այդ բառը):

Էջ 144. Ետ քարշել... և այնչափ սաստիկ քարշեցին: Քարշել թողնված է նույնությամբ ու անհամեանալի է. բայց հաջորդ 145 էջում պարզվում է. քարշել նշանակում է բաշ տալ. մինչդեռ քարշել այսուղ նշանակում է ծեծել, զանանարել: Համեմատիր Դատաւորք, Ը, 7 և 16. Եւ ես քարշեցից զմարմինս ձեր փշովք անապատի: Քարշել բայը մեր բերած նշանակությամբ գործ է ուծել նուի Բուզանդը, որ «Հայկազյան բառարանը» չի բերում: Վասն որոյ անդէն ի ներք քարշեին զնա յեկեղեցւոցն. Ի ներք քարշեին Բուզանդի թարգմանիչ հանգուցյալ ակադեմիկոս Ս. Մալխասյանցը թարգմանել է

ներս են քաշում, բայց Հուսիկը եկեղեցու ներսում է, երբ Տիրանը գտնիս է ներս մտնելու, նա արգելում է Տիրանին՝ ասելով Մի զար ի ներս. Նշանակում է Հուսիկը ներսում է. իսկ նրանք դրսից են գալիս, էլ ուր էին նրան ներս քաշում: Եվ հետո զբանով նախադասությունը վերջանում է, և ապա պատմիչը հաղորդում է. Բրածեծ եղեալ շախչախեալ... կոշկոնեալ ընկեցեալ լիներ (Բուդ., III, ԺԲ, Էջ 32):

Քաշել բայր այսօրվա բարրառներումն ույնովես նշանակում է ծեծել (տես Աճառյան «Գաւառական բառարան»). Ֆեր գյուղի (Կոտայք, Եղովան) խոսվածքում քաշել նաև այդ իմաստը ունի, բայց հատկապես շատ է գործածվում զույգ հոմանիշների ձևով. քաշեց տփեց. էրեխուն քաշե շարք ու փուոր ա արե: Դարարաղի բարրառով՝ մի լավ քաշըմ ըմ:

Էջ 87. Ի ժամ նակատոցն յանձնեալ ձեզ ի նոցանէ աղօրիւր, թարգմանված է. Բայց նակատամարտի ժամանակ ձեզ նանձնելով նրանց աղորին: Տիրականորեն այս թարգմանությունը բոլորովին չի համբնկնում բնագրին: Նախ յանձնեալ ձեզ կաղակցության մեջ ձեզ չի կարող ուղիղ խրնդիր լինել և չէ. Երկրորդ՝ աղօրիւր չի նշանակի աղորին: Այսուղ կամ անձնեալ պետք է նշանակի բաժանվելով կամ բայր պետք ունի սրբագրվելու: Մենք կարծում ենք, որ յանձնել նշանակում է բաժանվել և կթարգմանեինք. Դուք բաժանվելով նրանցից աղօրքներով, որովհետեւ շարունակության մեջ անմիջապես հետևում է յամուր տեղուց ուրեք բողուիր զնոսա:

Վասցնել թարգմանված է՝ ոչնչացնել, այսուղ (թարգմ. Էջ 115) պետք է թարգմանել՝ ցաք ու ցրի՛ անել, որովհետեւ սրան հաջորդում է զի առյօն աղքատորեանն ակամայ դիմեսցեն յօրէնս մոզուրեան. Եթե ոչնչանան, այլիս մոգության կրոնը չեն կարող ընդունել:

Կարծել (բնագիր, Էջ 26), նշանակում է՝ նամարել, ընդունել: Զգենու (զգենու զիւր սունդուած մարմինս) թարգմանված է առնել բայով, որը սուկայն չի բացահայտում նախադասության միտքը. դարձվածքը մնում է անորոշ: Պետք էր թարգմանել ուղղակի՝ նազնել, վրան կրել բայով:

Այլ դու յայսր ամենայնի (Էջ 31), թարգմանված է այս ամենի մասին: Սա մի աղավաղված նախադասություն է. պետք է լինի. յետ այսր ամենայնի. Ի (Յ)նախոգիրը սեսականով չի գործածիւմ:

Շնչել (շնչեաց չարախոսութիւն, Էջ 32), թողնվել է նույնությունը. շնչել այսուղ նշանակում է՝ վիշել, որովհետեւ հաջորդում է և բորբոքաց զրագաւորն իրեն զնուր անշիշանելի:

Յոյժ զեղչ է մտաց իմոց, թարգմանված է. Եվ ինձ նամար մեծ խղիահարուրյուն է. այս գարձվածքը նշանակում է՝ վախենում եմ: Շարունակության մեջ կարում ենք. թէ զուցէ աստուածքն բարկացեալ վասն ձեր ի մէնչ վրեժը առնոցուն (տես բնագիր, Էջ 35, թարգմ. 132): Կանացեաց բառը թարգմանված է՝ կանացի, թվում է, թէ պետք է թարգմանել՝ բուլասիրաների, այսինքն՝ կանացի աղամարգկանց (տես Էջ 92): Քանզի որչափ տգեղս առնես զմեզ երկրաւորաւս, զեղեցկազոյնս առնես զմեզ երկնաւորաւն (Էջ 145), թարգմանված է բառացի. Որքան մեզ աղեղացնես երկրավորով, այնքան ավելի կզեղեցկացնես երկնավորով: Անհանկանալի է. կամ պետք էր թարգմանել՝ որպես երկրավորի, որպես երկնաւորի, կամ ամելի ձիշտ. որքան մարմնով, այնքան հողով:

Սոյն այրս այս ի նմին զիշերի եւրն նարիւր արամբը ել զնաց ի բերդէ.

անտի և ոչ կարացին ձեռն արկանել ի նա: Նախ Երբ հարիւր արամբը-ի դիմաց ձեռագիրն ունի չորս արամբը, որ ավելի հավանական է, որովհետեւ շրջապատճած բերդից 7 հարյուրով չեխն կարող զուրս գտվ, և երկրորդ՝ ձեռն արկանել ի նա, նշանակում է բանել նրան և ոչ ձեռք տալ, որպես թարգմանված է (էջ 95, թարգմ. 194):

Էջ 51. Ընկեցեալ կայր այնունեսկ ոսկի, և ոչ որ առնոյր իւր առանձինն արծար, և արհամարհեալ առանց ազահուրեան, անարգեալ պատուական հանդերձը առ ի զարդս մեծարանաց: Կարծում ենք, այս նախագասությունը պետք է կետադրել և ուղղել այսպես. Ընկեցեալ կայր այնունեսկ ոսկի, և ոչ որ առնոյր իւր առանձինն, արծար արհամարհեալ առանց ագահութեան, անարգեալ... և այլն: Ուստի թարգմանությունն էլ պետք է ուղղել այսպես: Բացի այս, նախագասության մեջ հիշված առանձինն բառը, որ թարգմանության մեջ մնացել է նույնությամբ, գրաբարում միանգամայն այլ նշանակութիւն ունի: Սեփական ոչ որ առնոյր իւր առանձինն, պետք էր թարգմանել, Աչ որ իրեն չէր սեփականացնում: Առանձինն բառը եղնիկի մոտ համապատասխանում է հունարեն դօօօ¹ բառին, որ շփոթվել է հիւլէ բառի հետ (տես Եղնիկ, Վենետիկի հրատարակություն, էջեր 204—224):

Մրանց հետ արժե անել նաև մի քանի այլ մանր գիտողություններ ոչ այնքան որպես թերություն, որքան ի զգուշություն գրաբար բնագրերի հետագա թարգմանությունների համար: Ինչ բառը, որ ժխտական, պայմանական նախագասությունների մեջ թարմատար է, թարգմանված է ամենին բառով (տես բնագրի՝ էջեր 47—44, թարգմ.՝ 142—145): Կէս բառը գրաբարում մեծ մասամբ նշանակում է մի մասը: Տանկառան այժմ այլ նշանակություն ունի. գրաբարին անանդյակ մարդը կշփոթի թյուրքիայի հետ (46, թարգմ. 145): Կարսի (էջեր՝ բնագ. 48, թարգմ. 146) այսակա չի նշանակում զույր, այլ՝ դրամ և այդ նշանակությամբ էլ օրինակ է բերել «Հայկացյանը»: Պարդ է՝ պալտուից գոյք չեխն բերի:

Հրամանս ահազինս, չի նշանակում ահազին նրամաններ, այլ՝ սարսափելի, ահ ազդող նրամաններ (50—148): Պաշտօնեայ ամենուրեք չի թարգմանված: Պատուական նշանակում է բանկազին:

Անարգել տէրուրին անհաջող է թարգմանված՝ անխոչընդու տէրուրյուն, ասենք նաև, որ ձեռագրում անարգել բառը չկա (էջեր 55—153): Նույն տեղում Ասիացւոց կողմանց թարգմանված է՝ ասիացիների երկրներին, աշխարհաբար չէ: Պատրաստ եմք ի սպանանել և ի մեռանել արտահայտության մեջ՝ սպանանել պետք է սպանվել հասկանալ և ոչ սպանել: Ի գետ, ձեռագրում չկա սպանանել (էջեր 56, 154):

Եւ կուտէին բազում արծար և ոսկի զգէնս և զարդս զարի արանց և զրաշ երիվարաց պետք է ուղղել... զարի արանց և զրաշ, և զերիվարաց և ոչ զրաշ երիվարաց որպես հասկացված է:

Եւ զիսարէուրին սպատամբին Վասակայ, որպէս Հայոց բանիւ խարեսց զրագաւորն, յանձն առնուլ զմոզուրին նախադասության բանիւ խարեսց զրագաւորն մասը պետք է երկու կողմից առնել ստորակետերի մեջ որպէս բացահայտում զիսարէուրին բառին, ապա մնացած մասը թարգմանել՝ որպէս թե հայերը հանձն են առնուլ մոզուրյունը, ինչպես գրաբարյան մի շատ

¹ Տես H. Hübschmann, Armenianische grammatick, էջ 361, նիւթ բառի տակ:

կանոնավոր տրականիր անորոշով՝ արտահայտություն (համեմատիր բնագիր՝ 62, թարգմ. 160): Նաև ի սուրբ Եկեղեցւոյն, որ էր ազատ ի Քրիստոս, պետք է ուղղել նաև սուրբ Եկեղեցի..., իսկ ի Քրիստոս, որ բնագրում մի անորոշ կապակցություն է, թարգմանության մեջ մտացել է նույնությամբ՝ էլ ավելի անորոշ: Կամ պետք էր թարգմանել Քրիստոսի համար կամ՝ Քրիստոսի (էջ 35—132): Եւ էաւ իշխանութիւն ի վերայ կենաց նոցա (էջ 73—74): Կենաց ունի կյանքը նշանակությունը և ոչ ստացվածքը, որպես թարգմանված է: Ամանք առաջարկում են զգաստանալ բայց թարգմանել խնայել բայցով (էջ 151), շատ հարմար է, բայց ձեռագրում դրա փոխարեն ունենք զգացարուք:

Յայնօմ զխորհուրդն Արքահամու ի մէջ առեալ. խորհուրդ բառը միանգամայն ճիշտ թարգմանված է օրինակ բառով. համեմատիր առակ խորհրդոյ Արքահաման պատարագին (Նորմել, Խ7), բայց ի մէջ առեալ անիմաստ է, պետք է ուղղել ի միտ առեալ և թարգմանել՝ հիշելով և ոչ մեջ բերելով: Յիւր մարմինն փրկեաց զրոյր աշխարհս... թարգմանված է յուր մարմնի մեջ. պետք է թարգմանել՝ յուր մարմնով: Գրաբարում՝ շատ սովորական է ներգոյականը գործիականի խմաստով: Այդպիս է նաև չորրորդ դիմի առաջին էջի նր յոզի և մարմին դիմակնանայ, թարգմանված է՝ որի հոզին և մարմինը..., այնինչ պետք է լինի, որը հոզով և մարմնով դիմակ է դառնում: Բազմական նշանակում է՝ բարձ և ոչ՝ տեղ (տես թարգմ. էջ 163, և մեր հոդվածը «Փակուտոս Բուղանդի աշխարհաբար թարգմանությունը», տպված Լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածուի» 3-րդ հատորում, 1948 թ., էջ 330): Հաւասար բառը (էջ 69) միարանի և հաւասարը կապակցության մեջ չի նշանակում հավասար, այլ հոմանիշ է միարան բառին (համեմատիր Կորյուն, էջ 14, Թիֆլիս, 1913 թ.): Այսուղ տեղն է հիշել մի շարք գրաբարյան նման զույգ հոմանիշների մասին ևս. զրանցից մեկը գրվում է սեռական հոլովագ, իսկ մյաւսը բառ խնդրառության: Եղիշեն այդպիսի դարձվածքներ շատ է գործածում: Օրինակ՝ խորամանկութիւն խորհրդոյ, գուր սիրոյ, պատիծ պատուհանի, հրաման բանի, հոգ հնարից, ելս հնարից, պատրան խարէութեան, վիշտ նեղութեան, պատիծ դատապարտութեան, տագնապ խոռվութեան, նախանձ բարկութեան, բազուրիւն արութեան, վախնան կատարածի: Եվ կամ՝ կամաց ակնարկութեան. կամք կարծեաց, նաև նշանօր արուեստիւք: Կամ այնպիսիները, որոնք զույգ հոմանիշ բայեր են: Կանգնել կալ, կալ մնալ և այլն: Այսպիսի կապակցությունների գեղքում թարգմանիչը զգույշ պետք է վարդի, որովհետեւ, եթե երկու բառով է թարգմանում, մանավանդ այն պարագայում, երբ գրաբարյան այդ զույգ մենիմաստ բառերը աշխարհաբարում ստացել են բոլորովին տարբեր նշանակություններ, ապա բնագիրը փոխվում է. Օրինակ՝ բնագրի ի նախանձ բարկութեան բրդեցան պարզապես նշանակում է՝ զայրացան, բարկուցան, իսկ թարգմանության մեջ դուրս է եկել բորբոքվեցին նախանձնախնդրությամբ (ավելորդ) ու զայրույթով (թարգմ. էջ 148): Նույնպիս բնագրի (էջ 41) վիշտ նեղութեան թարգմանված է՝ վիշտ ու նեղություն, այնինչ պատմիչը միայն շեշտում է վիշտը, թախիծը: Մինչդեռ նեղություն այժմ կարող է այլ խմաստով հասկացվել: Եթե մի քանի տող կարգանք կպարզվի, որ նեղության մասին չի խոսվում: Հակասակ սրան ճիշտ են թարգմանված նշանօր արուեստիւք. կամք կարծեաց. զատաշարկութեան գոր-

ծոյն: Բայց առաջին ուսի առաջին նախադասության հրաման պատուիրանի պետք էր միայն պատվեր բառով թարգմանել: Նման մի դարձվածք է նաև յաւելում բայց կազմվող նախադասությունը, որտեղ յաւելում կրկնություն է ցույց տալիս (տես մեր «Գրաբարի հատընտիր», էջ 31, ծան. 14): Օրինակ՝ Եղիշեի յաւել և պատմեաց (իսկականն է՝ յաւել պատմել), կրկն պատմեց, և ոչ թե ավելացրեց պատմեց, որպես թարգմանված է:

Վերջացնելով մեր խոսքը թարգմանության մեր դիտած վրիպումների մտսին, արժե մի քանի տարրեր ընթերցումներ քերել մի քանի անունների վերաբերյալ, որ տալիս է մեր Մատենադարանի № 1888 ձեռագիրը: Այսպիս օրինակ՝ Միհրներսի վզրուկ հրամանատար... (էջ 20), ձեռագիրը հրամանատար բառի դիմաց ունի ի հարամատայ և ապա հաջորդ 22 էջում հազարավետիդ արեաց և անարեաց կապակցության մեջ չկա անարեաց, իսկ ամենայն մեծի սպասիդ արեաց-ի դիմաց՝ ունենք ամենայն մեծամեծաց սեփականաց (այսպիս) արեաց: Եպիսկոպոսների անվանացանկում Քասու կամ Քասուն անվան դիմաց ունենք Քասու, Եղաղ կամ Եղաղի անվան դիմաց՝ Ղազար: Ռըմբունան՝ Ռասրեան, Յուսկերան՝ Զողակերա: Չորրորդ գլխում արրված իշխանների ցանկում, Ապահունեաց Մանէն-ի դիմաց՝ Ամառունեաց Մանանին: Նույն տեղում ուարկաւագ մի Սահակ անուն-ից հետո նաև սարկաւագ մի Մուշէ անուն: Բայց երկրորդ գլխի նախարարների ցանկում ունենք ի տոհմէն Ապահունեաց Մանէն անուն, որ չի համբնկում մեր զերեւմ բերածին, բայց հենց այն թերթը, որ պարունակում է երկրորդ գլխում գտնվող նախարարների ցանկը, ձեռագրից ընկած է և նրա վոխարեն տարրեր թերթի վրա և տարրեր դրով ուրիշ թերթ է ավելացրած, որ անսպայմանորեն արտադրություն է մեզ ծանոթ բնադրերից: Բնագրի 57 էջի (Վենետիկ, 1859 թ.) զիշխանն Ապահունեաց զօրօ խրովքն ձեռագրում չկա, իսկ Տիրոց անվան դիմաց ունենք Տիրան: Հինգերորդ գլխի անունների ցանկի թերթը նույնպես ընկած է:

Այս փաստերը ցույց են տալիս, որ Եղիշեի գիրքը մեզ հասել է բազմաթիվ փոփոխություններով, աղձատումներով: Անկարելի էր, որ հիշյալ աղավազումները չաղգեին Եղիշեի նոր թարգմանության վրա, որի հետեւնքով էլ, ինչպես տեսանք, կան մի շարք անձշտություններ, թյուրիմացություններ, որոնց վերացումը ամբողջովին հնարավոր կլինի Եղիշեի համահավաք բնադրի հրատարակությունից հետո: Աբդյո՞ք այս հանգամանքը չի ստիպում տաել, որ աշխարհաբար թարգմանելուց առաջ անհրաժեշտ է կազմել համահավաք բնադրեր, որոնցից և կատարել թարգմանություններ*:

* Ավելորդ չենք համարում նշել, որ Ե. Տեր-Մինասյանը Եղիշեի աշխարհաբար թարգմանությունը կատարել է Հայրենական պատերազմի տարիներին, երբ Մատենադարանի ձեռադրերը չեն արվում օգտագործման: Բնականաբար այն ժամանակ թարգմանիչը զրկված էր բնադրերը ձեռադրերի հիման վրա սրբազրելու հնարավորությունից:

Այժմ հենց իր՝ Ե. Տեր-Մինասյանի պատրաստած՝ Եղիշեի պատմության դիտական-համեմատական բնադրերը հանձնված է տպագրության և շուտով լույս կտեսնի: (Մանոթ-խմբագրության):

